Հաստատված է

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2018 թ փետրվարի 28-ի թիվ 29 նիստում

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի նախագահ_____Ս. Ա. Առաքելյան

ԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

1. Սույն կարգը սահմանում է Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ) կողմից կազմակերպվող գիտաժողովներին դրամական աջակցություն տրամադրելու կարգն ու պայմանները:

2. Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կողմից կազմակերպվող (կազմակերպիչ, կամ համակազմակերպիչ) գիտաժողովներին Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի ֆինանսական միջոցների հաշվին տրամադրվում է դրամական աջակցություն՝ հետևյալ պայմանների առկայության դեպքում և նշված չափերով.

ա) 5-20 արտասահմանյան մասնագետ-մասնակիցներ ունեցող միջազգային գիտաժողովի կազմակերպման համար տրամադրվում է դրամական աջակցություն մինչև 350000 ՀՀ դրամի չափով:

բ) 20 և ավելի արտասահմանյան մասնագետ-մասնակիցներ ունեցող միջազգային գիտաժողովի կազմակերպման համար տրամադրվում է դրամական աջակցություն մինչև 500000 ՀՀ դրամի չափով:

գ) Առնվազն 10 համալսարանական և 10 արտահամալսարանական մասնագետ-մասնակիցներ ունեցող հանրապետական գիտաժողովի կազմակերպման համար տրամադրվում է դրամական աջակցություն մինչև 150000 ՀՀ դրամի չափով:

Սույն կետի իմաստով գիտաժողովի մասնագետ-մասնակից է համարվում գիտաժողովին մասնակցող տվյալ կամ հարակից ոլորտի այն մասնագետը, որը գիտաժողովի ընթացքում հանդես է գալիս գիտական զեկուցմամբ:

3. Սույն կարգի 2-րդ կետի որևէ ենթակետին՝ կազմակերպվող գիտաժողովի համապատասխանությունը որոշելու նպատակով, գիտաժողովի կազմակերպիչը գիտաժողովի մեկնարկից առնվազն 2 օր առաջ ԵՊՀ ԻՄ-ի գիտակազմակերպական վարչություն է ներկայացում գիտաժողովի ծրագիրը, զեկուցողների անվանացանկը և թեզիսների ժողովածուն:

4. Գիտակազմակերպական վարչությունը գիտաժողովի անցկացման ընթացքում ստուգում է գիտաժողովի մասնակիցների համապատասխանությունը կազմակերպչի կողմից ներկայացված անվանացանկին:

5. Գիտաժողովի ավարտից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում գիտաժողովի կազմակերպիչը ԵՊՀ ԻՄ-ի գիտակազմակերպական վարչություն է ներկայացնում գիտաժողովի ընթացքում կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերը՝ սույն կարգի 2-րդ կետի համապատասխան ենթակետում նշված գումարի սահմաններում:

6. ԵՊՀ ԻՄ-ի գիտակազմակերպական վարչությունը, հավաստիանալով ներկայացված փաստաթղթերի համապատասխանության մեջ, կազմում և ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի հաստատմանն է ներկայացնում գիտաժողովի կազմակերպմանը դրամական աջակցություն տրամադրելու մասին հրամանի նախագիծը: